ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. **N –Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N496-Ն և N497-Ն որոշումները, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3 հոդվածի 24-րդ մասը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 29-ի N1/Ա-7 եզրակացությունը և իրավասու պետական կառավարման մարմինների համաձայնությունները՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի մշակման նախագծային առաջադրանքը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի «Երևանի գլխավոր հատակագծի մինչև 2030 թվականը զարգացման ճշգրտման նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքը հաստատելու մասին» N 303-Ա որոշումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022 թվականի ….. -ի N -Ա որոշման

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի մշակման

1. Համայնքի հիմնական բնութագիրը

1) **Անվանումը:** Երևան համայնք:

2) **Տարածքը:**
Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված տարածքը՝ 223 քառ. կմ (2021թ. հունվարի 1-ի դրությամբ):
«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքին համապատասխան Երևան քաղաքի 12 վարչական շրջանների տարածքները.

- Էրեբունի՝ 4749 հա,
- Շենգավիթ՝ 4060 հա,
- Աջափնյակ՝ 2582 հա,
- Մալաթիա-Սեբաստիա՝ 2516 հա,
- Ավան՝ 726 հա,
- Դավթաշեն՝ 647 հա,
- Նորք-Մարաշ ՝ 476 հա,
- Նուբարաշեն՝ 1724 հա,
- Նոր-Նորք՝ 1411 հա,
- Քանաքեռ-Զեյթուն՝ 773 հա,
- Արաբկիր՝ 1329 հա,
- Կենտրոն՝ 1335 հա:

3) **Հողային ֆոնդի փաստացի բաշխումը** (2021 թվականի հուլիսի 1-ի դրությամբ):

- Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված տարածքը ՝ 22 000 հա,
- բնակավայրի հողեր՝ 11894.5 հա,
- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3348.0 հա:
- արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ 3114.3 հա,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 915.6 հա,
- հատուկ պահպանվող տարածքներ՝ 1022.8 հա,
- (այդ թվում՝պատմական և մշակութային հողեր՝ 655,7 հա,
- հատուկ նշանակության հողեր՝ 1062.4 հա,
- անտառային հողեր՝ 822.3 հա,
- ջրային հողեր՝ 172.9 հա,

- պահուստային հողեր՝ չկան,
- քաղաքացիների սեփականության հողեր՝ 5529.9 հա,
- իրավաբանական անձանց սեփականության հողեր՝ 2846.8 հա,
- համայնքային սեփականության հողեր՝ 10550.3 հա,
- պետական սեփականության հողեր՝ 3386.0 հա,
- օտարերկրյա պետությունների, կազմակերպությունների հողեր՝ 4.9 հա:

4) **Բնակչության թիվը (մշտական):**

- 2021թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 1 091.7 հազար մարդ,
- Բնակչության խտությունը՝ 4 895 մարդ մեկ քառակուսի կիլոմետրի վրա,
- Սեռատարիքային կազմը՝ տղամարդիկ՝ 504 770 և կանայք՝586 977, մասնավորապես.

0-14 տարեկան՝ 21%,
15-24 տարեկան՝ 10.2%,
25-64 տարեկան՝ 52.8%
65- 80 և ավելի տարեկան՝ 16%:

5) **Բնական, բուժական, առողջարարական, հանքահումքային և այլ ռեսուրսների հիմնական տեսակները:**

ա) ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր՝ գիպսատար կավ՝ 6 հատ, հրաբխային խարամ՝1 հատ, կավ՝ 1 հատ, տուֆ՝ 8 հատ, բազալտ՝ 7 հատ, ավազ՝ 2 հատ, կերակրի աղ՝ 2 հատ, գիպսատար ապարներ՝ 4 հատ, դոլորիտային բազալտ՝ 1 հատ (համաձայն Հանրապետական երկրաբանական ֆոնդի տվյալների),
բ) ջրային ռեսուրսներ՝ 2 քաղցրահամ ջրերի աղբյուրներ:

6) **Արտադրության գերիշխող ճյուղերը:**
Երևան քաղաքի արդյունաբերական և տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները. արդյունաբերություն (հանրապետության ընդհանուր ծավալի 40.8%-ը), շինարարություն (հանրապետության ընդհանուր ծավալի 61.0%-ը), մանրածախ առևտուր (հանրապետության ընդհանուր ծավալի 74.0%-ը), ծառայություններ (հանրապետության ընդհանուր ծավալի 82.2%-ը), սննդամթերքի (ներառյալ խմիչքներ) արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

7) **Ինժեներատրանսպորտային ապահովվածությունը:**
ա) ինժեներական ապահովվածություն
Ջրամատակարարում: Մայրաքաղաքում մայրուղային ջրատարների երկարությունը կազմում է 814.1 կմ, փողոցային ցանցը՝ 897.7 կմ, միջթաղային և միջբակային ցանցը՝ 400.2 կմ, 192.9 հազ. խմ տարողությամբ 20 օրվա կարգավորիչ ջրամբարներ (ՕԿՋ):
Ջրահեռացում: Ջրահեռացումն իրականացվում է. 5 կոյուղու փողոցային ցանցի միագիծ երկարությունը՝ 87.3 կմ, գլխավոր կոլեկտոր՝ 248.9 կմ, փողոցային ցանց 587.3 կմ, միջթաղային և միջբակային ցանց՝ 266.9 կմ:

Գազի բաշխիչ ցանցի միագիծ երկարությունը կազմում է 1 774.15 կմ, գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը՝ 281 727:

բ) տրանսպորտային ապահովվածություն

Երևան քաղաքի փողոցների և անցումների ընդհանուր երկարությունը կազմում է 1 015.7 կմ, փողոցների, անցումների և հրապարակների (ներառյալ մայթերի) ընդհանուր մակերեսը (ծածկույթով և առանց ծածկույթի)՝ 15 752.7 քառ.մ:

Երևանի ճանապարհափողոցային ցանցի հիմքը կազմավորում են մայրուղային փողոցներն ու ճանապարհները, որոնք իրենց վրա են վերցնում հիմնական տրանսպորտային հոսքը: Հիմնական տրանսպորտային կապերն ապահովվում են մայրուղային փողոցների միջոցով, որոնք կապում են հարևան ծայրամասային բնակելի թաղամասերը միմյանց հետ և շառավղային մայրուղիներով, որոնք սկիզբ են առնում քաղաքի կենտրոնական մասից: Քաղաքի տարածքում հասարակական և մասնավոր տրանսպորտի աշխատանքի անհավասարաչափ բաշխվածության պատճառով՝ հիմնական ծանրաբեռնվածությունն ընկնում է քաղաքի կենտրոնական մասի վրա:

Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի ներկայիս գործող երթուղային ցանցի սպասարկումն իրականացվում է ավտոբուսներով, տրոլեյբուսներով, միկրոավտոբուսներով և մետրոպոլիտենով:

2. Համայնքի զարգացման հիմնական հեռանկարային ուղղությունները

Գլխավոր հատակագծի նախագծի մշակման աշխատանքներն իրականացվում են՝ ուղղորդվելով ՀՀ կառավարության կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման գլխավոր նախագիծ» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթում նախանշված տարածաշրջանի քաղաքաշինական հիմնակմախքի և նրա տարրերի կատարելագործման և զարգացման հիմնական ռազմավարական ուղղությունների, տարածքի դեմոգրաֆիական տարողունակության, էկոլոգիական հավասարակշռության պահպանման պահանջների ապահովմամբ, ինչպես նաև ելնելով ելնելով Երևան քաղաքի 2005-2020թթ. գլխավոր հատակագծի իրագործման վերլուծության, քաղաքի զարգացման ռազմավարության ուղղությամբ մասնագիտական ու հանրային քննարկումների միջոցով ստացված առաջարկությունների և եզրահանգումների, Երևանի տարածական զարգացման հիմնական ուղղությունների հստակեցման և գխավոր հատակագծի հայեցակարգի մշակման արդյունքներից:

3. Քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքների պաշտպանության միջոցառումներին վերաբերող հիմնական պահանջները

Երևանի տարածական զարգացման հիմնական հայեցակարգային դրույթներն են.

1) մայրաքաղաքային գործառույթների հստակեցում,

2) Երևան-քաղաքամերձ գոտի-ագլոմերացիա տարածքների քաղաքաշինական գործառույթների իրականացում,

3) քաղաքի կառուցապատման ամբողջականացում և արդիականացում, հարկայնության սահմանման կանոնակարգում,
4) պատմամշակութային հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանում և օգտագործում, Երևան քաղաքի պատմամշակութային հուշարձանների հիմնավորման նախագծի զուգահեռ լրամշակում և ներառում գլխավոր հատակագծի կազմում,
5) արդյունաբերական գոտիների և արտադրական օբեկտների նպատակային օգտագործման ուղղությունների մշակում,
6) հասարակական նշանակության հանգստի կենտրոնների բարելավում,
7) բնակելի ֆոնդի նորացում և արդիականացում,
8) ինժեներական ենթակառուցվածքների և հաղորդակցուղիների ցանցերի արդիականացում, անհրաժեշտ հզորությունների ստեղծում,
9) կանաչ գոտիների բարեկարգում, վերականգնում և հնարավորինս համակարգված ավելացում,
10) ճանապարհափողոցային ցանցի և երթևեկության բարելավում, Երևանը շրջանցող մայրուղային ճանապարհների կազմակերպում, քաղաքի կենտրոնի բեռնաթափում,
11) բնական և տեխնածին արտակարգ իրավիճակների կանխարգելման, հետևանքների նվազեցման և քաղաքացիական պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացում: Բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանությանն ուղղված միջոցառումներն իրականացնել 1998 թվականի դեկտեմբերի 2-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՕ-265 օրենքի 4-րդ և 7-րդ հոդվածների ու 2002 թվականի մարտի 5-ի «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՕ-309 օրենքի 7-րդ հոդվածի «բ», «գ», «ը» և 8-րդ հոդվածի «գ» կետերի դրույթների համաձայն: Բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքների պաշտպանությանն ուղղված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներին ներկայացվող հիմնական պահանջներն ապահովել ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթների համաձայն (2002 թվականի հունիսի 12-ի «Սեյսմիկ պաշտպանություն մասին» ՀՕ-376-Ն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մաս, ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 9-ի N 136 որոշման N 2 հավելվածի 3.3.1 կետի, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի 1920-Ն որոշման N 2 հավելվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետի և ՀՀ կառավարության 2012թ. հոկտեմբերի 25-ի N 1351-Ն որոշման 2–րդ կետի 4-րդ ենթակետի՝ օբյեկտների սեյսմակայունության ապահովման նպատակով: Օբյեկտների սեյսմակայունությունն ապահովել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀՇՆ 20.04- «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների համաձայն),

12) Երևանի փոքր կենտրոնի ճարտարապետական կերպարի ինքնության պահպանում, կառուցապատման գեղագիտական միջավայրի կատարելագործում, գրավիչ և հարմարավետ կենսամիջավայրի կազմավորում,

13) քաղաքաշինական միջավայրում բնակչության սակավաշարժ խմբերի մատչելիության ապահովում,

14) Երևանի զբոսաշրջության զարգացման քաղաքաշինական կազմակերպում:

4. Նախագծման հիմքերը և համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման ևտեղական ինքնակառավարման մարմինների որոշումները

Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևանի զարգացման 2019-2023թթ. ինգամյա ծրագրի հաստատման մասին» N184-Ա, 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևանի զարգացման 2022 թվականի ծրագրի հաստատման մասին» N496-Ն և «Երևանի քաղաքի 2022 թվականի բյուջեի մասին» N497-Ն և ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1351-Ն որոշումներ:

5. Նախագծման համար անհրաժեշտ ելակետային տվյալների ցանկը՝

1) սահմանված կարգով հաստատված սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզը.
2) ինժեներաերկրաբանական շրջանացման (պայմանների) քարտեզը, ինչպես նաև երկրաբանական պայմանների վերաբերյալ այլ տեղեկատվություն (այդ թվում՝ «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ից՝ առկայության դեպքում).
3) տարածքի տեղագրական հանույթները, կադաստրային քարտեզագրման նյութերը (տարածքի կառուցապատված և չկառուցապատված հատվածները, փաստացի հողօգտագործումների և սեփականության սուբյեկտների, անշարժ գույքի կադաստրի թեմատիկ շերտերի այլ տվյալներ), հողօգտագործման քարտեզները.
4) տվյալներ նախկինում հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, բնության, պատմության և մշակույթի հուշարձանների ու դրանց պահպանական գոտիների զբաղեցրած տարածքների, հողաշինական և սեյսմիկ շրջանացման քարտեզների, ինժեներաերկրաբանական հետազոտությունների և այլ նյութերի մասին, արխիվային նյութերի ցանկը (առկայության դեպքում).
5) տվյալներ տարածքի փաստացի օգտագործման, բնակելի, հասարակական, արտադրական կառուցապատման, կոմունալ տնտեսության, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքի առկա իրավիճակի մասին.
6) տվյալներ շրջակա միջավայրի վիճակի, բնության հատուկ պահպանվող տարածքների և դրանց պահպանական գոտիների վերաբերյալ (առկայության դեպքում), բնական ու տեխնածին արտակարգ իրավիճակների աղբյուրների, քաղաքացիական պաշտպանության, տարածքի սանիտարահիգիենիկ և հակահրդեհային պայմանների մասին.
7) առաջադրանքով ամրագրված լրացուցիչ պահանջին վերաբերող նյութեր (եթե այդպիսիք առկա են):

6. Համայնքի զարգացման առանձնահատկություններից բխող այլ լրացուցիչ պահանջներ

Նախագծի մշակման արդյունքում կարող են դուրս բերվել Երևան քաղաքի զարգացման առանձնահատկություններից բխող այլ լրացուցիչ պահանջներ,

որոնց վերաբերյալ հիմնավորումներն ու եզրահանգումները ևս պետք է ներառվեն նախագծի դրույթներում:

7. Նախագծի գրաֆիկական և տեքստային մասերին ներկայացվող հիմնական պահանջները

Նախագծի գրաֆիկական և տեքստային մասերը պետք է մշակվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1920-Ն որոշման N1 և N2 հավելվածների պահանջներին համապատասխան:

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրի հաստատման մասին» N184-Ա, Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևանի զարգացման 2022 թվականի ծրագրի հաստատման մասին» N496-Ն և «Երևանի քաղաքի 2022 թվականի բյուջեի մասին» N497-Ն որոշումներով նախատեսված է Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի նախագծի մշակումը:

Երևան քաղաքի 2005-2020թթ. գլխավոր հատակագծի գործողության ժամկետը լրացել է 2020 թվականին: Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի N302-Ա որոշման 1-ին կետի համաձայն Երևան քաղաքի 2005-2020 թվականների հաստատված գլխավոր հատակագիծը գործողության մեջ է մինչև Երևանի նոր գլխավոր հատակագծի նախագծի սահմանված կարգով մշակումը և հաստատումը, բայց ոչ ուշ, քան մինչև 2025 թվականի հունվարի 1-ը:

Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի N303-Ա որոշմամբ հաստատվել էր Երևանի գլխավոր հատակագծի մինչև 2030 թվականը զարգացման ճշգրտման նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքը: Սակայն ժամկետների առումով նպատակահարմար է գտնվել նոր գլխավոր հատակագծի մշակումը՝ 15 տարվա զարգացման հեռանկարով:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 14.3-րդ հոդվածի պահանջների՝ համայնքի գլխավոր հատակագիծը՝

1) հանդիսանալով ռազմավարական բնույթի քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթուղթ՝ սահմանում է՝

ա. համայնքի տարածական զարգացման հիմնական ուղղությունները,

բ. քաղաքաշինական գործունեության օբյեկտ հանդիսացող հողերի օգտագործման ռեժիմները, պարտադիր պահանջներն ու սահմանափակումները,

գ. հողատարածքների կառուցապատման առաջնահերթ (մինչև 5 տարի), միջնաժամկետ (5-10 տարի) և հեռանկարային (10-15 տարի) փուլերը,

դ. համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողամասերի նպատակային նշանակությունը և (կամ) դրանց փոփոխությունները՝ օրենքի և սույն կարգի պահանջների կատարման ապահովմամբ,

ե. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պահանջներ և սահմանափակումներ:

Գլխավոր հատակագծի նախագծի մշակման աշխատանքներն իրականացվելու են՝ ուղղորդվելով ՀՀ կառավարության կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման գլխավոր նախագիծ» քաղաքաշինական

ծրագրային փաստաթղթում նախանշված տարածաշրջանի քաղաքաշինական հիմնակմախքի և նրա տարրերի կատարելագործման և զարգացման հիմնական ռազմավարական ուղղությունների, տարածքի դեմոգրաֆիական տարողունակության, էկոլոգիական հավասարակշռության պահպանման պահանջների ապահովմամբ, ինչպես նաև ելնելով ելնելով Երևան քաղաքի 2005-2020թթ. գլխավոր հատակագծի իրագործման վերլուծության, քաղաքի զարգացման ռազմավարության ուղղությամբ մասնագիտական ու հանրային քննարկումների միջոցով ստացված առաջարկությունների և եզրահանգումների, Երևանի տարածական զարգացման հիմնական ուղղությունների հստակեցման և գխավոր հատակագծի հայեցակարգի մշակման արդյունքներից:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 24-րդ մասը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ ենթակետի և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ ենթակետի, գլխավոր հատակագիծը մշակվում է համայնքի ավագանու կողմից հաստատված նախագծման առաջադրանքի հիման վրա, համայնքի ղեկավարի պատվերով:

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի, նախագծման առաջադրանքը համաձայնեցված է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի (2022թ. հունիսի 29-ի N1/Ա-7 եզրակացություն) և իրավասու պետական կառավարման մարմինների հետ:

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման պահանջների, ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացություն ստացած նշված նախագծի քաղաքաշինական առաջադրանքը 2022թ. հուլիսի 12-ին Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում ներկայացվել է Երևան համայնքի բնակչության իրազեկմանը:

Սահմանված 15 օրվա ընթացքում բնակչությունից գրավոր առաջարկություններ չեն ստացվել:

Որոշման նախագծի 2-րդ կետով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի N303-Ա որոշումը, որով հաստատվել էր Երևանի գլխավոր հատակագծի մինչև 2030 թվականը զարգացման ճշգրտման նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի մշակման նախագծային առաջադրանքը հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի մշակման նախագծային առաջադրանքը հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2022 թվականի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ